

Հայաստանն առաջատար է տարածաշրջանում



Վերջին տասնութ տարիներին ավելի քան 6 հազար աշխատանք է տպագրվել

Հայաստանը բնական գիտությունների ոլորտում բարձր վարկանիշ ունեցող երկիր է: Հայ գիտնականների տպագրած հոդվածներով եւ վերջիններիս կատարված հղումների քանակով Հայաստանը բավական առաջ է տարածաշրջանի մյուս երկրներից՝ Ադրբեջանից եւ Վրաստանից:

Այս մասին երեկ լրագրողների հետ հանդիպման ժամանակ հայտարարեց Հայաստանի կրթության եւ գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի նախագահ Մամվել Հարությունյանը՝ նշելով, որ վերջին տասնութ տարիներին միջազգային բարձր վարկանիշ ունեցող ամսագրերում հայ գիտնականներին պատկանող ավելի քան 6 հազար աշխատանք է տպագրվել, նրանց ավելի քան 46 հազ. հղումներ են կատարվել:

Ս. Հարությունյանը նշեց, որ ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեն գործունեության երեք տարվա ընթացքում հասցրել է մի շարք ուսումնասիրություններ կատարել եւ կազմել բազմաթիվ ծրագրեր, որոնք նպաստում են գիտության զարգացմանը:

ՀՀ—ում առկա է նաեւ «ուղեղների արտահոսք», որը բնորոշ է հետխորհրդային բոլոր երկրներին:

Այս տարվա ապրիլին ստեղծվել է ՀՀ վարչապետին կից գիտատեխնիկական խորհուրդ, որի նպատակն է հանրապետության տնտեսությունում կիրառել նորարարական բնույթի մտտեցումներ եւ բարձրացնել այդ բնագավառում ընդունվող իրավական ակտերի արդյունավետությունը, ուսումնասիրել արդյունաբերության ճյուղերի եւ գյուղատնտեսության զարգացման ծրագրերը, մշակել տնտեսական նոր ծրագրեր: Ս. Հարությունյանը նշեց, որ գիտության պետական կոմիտեի ծրագրերով շուրջ 50 պետական գիտաժողովներ են կազմակերպվել, եւ մոտ 70 առաջատար գիտաշխատողներ են գործուղվել արտասահման: Իսկ ՀՀ կառավարության 2010թ. մայիսի 6—ի որոշմամբ՝ գիտության պետական կոմիտեն նշանակվել է «Քենդլ» միջազգային կենտրոնի նախագծի իրականացման պատասխանատու: «Կենտրոնը, որին տրվել է գիտության եւ առաջատար տեխնոլոգիաների բնագավառում ռազմավարական ազգային գերակայության կարգավիճակ, ստեղծվել է Հայաստանում առաջատար կիրառական գիտական հետազոտությունների երկարաժամկետ զարգացումն ապահովելու եւ տնտեսության գիտատար ուղղությունների համար անհրաժեշտ փորձարարական բազա ստեղծելու նպատակով»,—ասաց նա՝ հավելելով, որ գիտության պետական կոմիտեն բանակցում է նաեւ միջազգային «Springer» հրատարակչության հետ, եւ մոտ ապագայում հայ գիտնականները կկարողանան օգտվել այդ հզոր գիտատեղեկատվական կառույցի էլեկտրոնային գրադարանից, որում ընդգրկված է շուրջ 200 հազար գիտատեխնիկական ամսագիր, 2 500 անուն գիտական այլ գրականություն:

Երիտասարդ գիտնականների մեծամասնությունը նախընտրում է աշխատել արտերկրում, ասում է Սամվել Հարությունյանը

Մոնա Հակոբյան

2020 թվականին գիտության բնագավառում Հայաստանի Հանրապետությունը միջազգային մակարդակով մրցակից երկիր կլինի, այսօր ՄԱԱ-ում հավաստիացրել է Գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանը: Գերատեսչության ղեկավարը, մասնանշելով ոլորտի բոլոր ձեռքբերումներն ու խնդիրները, մասնավորապես առանձնացրել է գիտությանը հատկացվող գումարը: Ըստ Սամվել Հարությունյանի՝ որքան էլ զարգանա գիտությունը, եթե չլինի համապատասխան ֆինանսավորում, այն չի արդարացնի սպասումները:

Արդեն 3 տարի է գործում է գիտության պետական կոմիտեն: Կառույցի հիմնական առաքելությունն է՝ մշակել գիտության, գիտատեխնիկական գործունեության ոլորտում պետության քաղաքականությունն ու իրականացնել այն: Գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանի խոսքով՝ Հայաստանը գիտական լուրջ պոտենցյալ ունի, պարզապես, այն պետք է ճիշտ օգտագործել: Այս առումով Սամվել Հարությունյանը շատ է կարևորում ոլորտի ֆինանսավորումը: Ի դեպ, ոչ միայն պետության, այլև մասնավորի կողմից:

«Այսօր ՀՀ պետական բյուջեն մոտավորապես 24 մլն դոլարի է հավասար, եթե հաշվենք գրանտային ծրագրերը, 34 մլն դոլարանոց բյուջե ունենք, դա շատ քիչ է: Որպեսզի գիտությունը դառնա մուլտիպլիկատիվ էֆեկտ առաջանող ոլորտ, ապա միայն պետական միջոցներով զարգացնելը դրան չի բերի, սովորաբար միջին եվրոպական չափանիշերով պետք է պետական ու մասնավոր հատվածը համագործակցեն: ՀՀ-ում մեր մասնավոր բիզնեսը ցավոք սրտի դեռ չի կարողանում նորմալ գնահատել գիտության դերը»:

Անդրադառնալով ոլորտի հաջողություններին՝ Սամվել Հարությունյանը մասնավորապես առանձնացրեց վերջին մի քանի ամիսների ձեռքբերումները, որոնք կոմիտեի նախագահի հավաստիացմամբ՝ առաջիկա տարիների համար կարող են բեկումնային նշանակություն ունենալ:

«Դա «Քենդլ» ծրագիրն էր, որի նպատակն է Հայաստանում ստեղծել նոր սերնդի արագացուցիչ: Մարքը հնարավորություն կտա գիտության մի շարք ոլորտներում լուծել բեկումնային խնդիրներ: Հայաստանում կզարգանան գիտության մի շարք խնդիրներ: Ծրագիրը ոչ միայն գիտական, այլև քաղաքական մեծ նշանակություն ունի»:

Գիտության պետական կոմիտեն այսօր բանակցում է նաև միջազգային «Springer» հրատարակչության հետ և Սամվել Հարությունյանի տեղեկացմամբ՝ մոտ ապագայում հայ գիտնականները կկարողանան օգտվել այդ հզոր գիտատեղեկատվական կառույցի էլեկտրոնային գրադարանից, որում ընդգրկված է շուրջ 2000 գիտատեխնիկական ամսագիր եւ 2500 անուն գիտական այլ գրականություն: Ձեռքբերումներից Սամվել Հարությունյանն առանձնացրեց նաև վարչապետին կից գիտատեխնիկական խորհրդի ստեղծումը:

Ի հարկե կան որոշակի հաջողություններ, բայց կան նաև բացթողումներ, խոստովանեց

կոմիտեի նախագահը: Լուրջ խնդիր է «ուղեղների» արտահոսքը: Սոցիալական անապահով պայմաններից ելնելով՝ երիտասարդ գիտնականների մեծամասնությունը նախընտրում է աշխատել արտերկրում:

«Մեր ամբողջ խնդիրը նրանում է, որ մարդիկ գնան և վերադառնան: Բավականին ծանր խնդիր է, մեկ տարվա լուծելու խնդիր չէ: Էապես կախված է բյուջեից: ՀՀ-ում այսօր կան ավելի քան 80 համալսարան: Արդյոք այդքան մասնագիտություն մեզ պետք է, թե՞ ոչ: Եթե մեր կրթությունն ու գիտությունը պահանջված դառնա և պետական պատվերը ձևավորվի՝ ելնելով մեր տնտեսության կարիքներից, ինձ թվում է խնդիրը կամաց-կամաց կլուծվի: Բայց մեր հայկական հոգեկերտվածքն այնպիսին է, որ շատ հաճախ դիպլոմին ավելի մեծ տեղ են տալիս, քան գիտելիքին»:

Շուտով կառավարություն կներկայացվի Հայագիտության ոլորտի զարգացման 5-ամյա ծրագիրը

Շուտով կառավարություն կներկայացվի գիտության առաջիկա 5 տարիների զարգացման ռազմավարական ծրագիրը, Հայագիտության ոլորտի զարգացման 5-ամյա ծրագիրը, իսկ Գիտության զարգացման 10-ամյա ծրագիրն արդեն ընդունվել է: Այս մասին Մամուլի ազգային ակումբում լրագրողների հետ սեպտեմբերի 8-ի հանդիպմանը հայտնեց ՀՀ Կրթության եւ գիտության նախարարության Գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանը:

Գիտության ոլորտում պետական քաղաքականություն մշակող եւ իրականացնող, շուրջ 3 տարի գործող պետական կառույցի ղեկավարը կարելու է համարում վերջերս վարչապետին կից Գիտիտեխնիկական խորհրդի ստեղծումը, որը նպատակ ունի բարձրացնել ոլորտում ընդունվող իրավական ակտերի արդյունավետությունը, ձեւավորել արդյունաբերության ճյուղերի եւ գյուղատնտեսության զարգացման ծրագրերի ուսումնասիրության, տնտեսական նոր ծրագրերի մշակման հիմնարար չափանիշները: Խորհրդի առաջիկա նիստերում նախատեսվում է քննության առնել Հայաստանում մեծ քիմիայի երբեմնի համբավը վերականգնելու, ինչպես նաեւ գյուղատնտեսական մեքենաշինության հարցերը:

Ս.Հարությունյանը իրականացվելիք ծրագրերի թվում հատկապես կարելուրեց «Քենդլ»-ը, որի նպատակն է Հայաստանում ստեղծել տարրական մասնիկների նոր սերնդի արագացուցիչ: Այն հնարավորություն կտա գիտության մի շարք ոլորտներում լուծել բեկումնային խնդիրներ: Ըստ Ս.Հարությունյանի, Հայաստանը հայտարարել է, որ պատրաստ է ֆինանսավորել ծրագրի արժեքի 25 տոկոսը: Ծրագրին կարող են մասնակցել նաեւ այլ երկրներ: Արդեն այս հարցով բանակցություններ են ընթացել ֆրանսիացի գիտնականների հետ, նախատեսվում են բանակցություններ Ռուսաստանի, ԱՄՆ-ի, Գերմանիայի, Չինաստանի գիտնականների հետ:

Գիտության պետական կոմիտեի ղեկավարը գոհունակություն հայտնեց, որ էապես ավելացել են տնտեսական ծախսերն հոգալու նպատակով գիտահետազոտական հիմնարկներին հատկացվող ֆինանսական միջոցները: Պետական միջոցներով վերջին 2 տարիներին ավելի քան 50 միջազգային գիտաժողով է ֆինանսավորվել, մոտ 70 առաջատար գիտնականներ են գործուղվել աշխարհի տարբեր երկրներ, իրականացվում են երիտասարդ գիտնականներին աջակցության եւ այլ ծրագրեր:



2010-09-08

Մ. Հարությունյան. «Գիտական ոլորտում Հայաստանն առաջատար է տարածաշրջանում»

Հայաստանը բնական գիտությունների ոլորտում բարձր վարկանիշ ունեցող երկիր է: Հայ գիտնականների տպագրած հոդվածներով եւ վերջիններիս կատարված հղումների քանակով Հայաստանը բավական առաջ է տարածաշրջանի մյուս երկրներից՝ Ադրբեջանից եւ Վրաստանից: Այս մասին այսօր լրագրողների հետ հանդիպման ժամանակ հայտարարեց Հայաստանի կրթության եւ գիտության նախարարության Գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանը՝ նշելով, որ վերջին տասնութ տարիներին միջազգային բարձր վարկանիշ ունեցող ամսագրերում հայ գիտնականներին պատկանող ավելի քան 6 հազար աշխատանք է տպագրվել, նրանց ավելի քան 46 հազ. հղումներ են կատարվել:

Մ. Հարությունյանը նշեց, որ ՀՀ ԿԳՆ Գիտության պետական կոմիտեն գործունեության երեք տարվա ընթացքում հասցրել է մի շարք ուսումնասիրություններ կատարել եւ կազմել բազմաթիվ ծրագրեր, որոնք նպաստում են գիտության զարգացմանը: ՀՀ-ում առկա է նաեւ «ուղեղների արտահոսք», որը բնորոշ է հետխորհրդային բոլոր երկրներին: Այս տարվա ապրիլին ստեղծվել է ՀՀ վարչապետին կից Գիտատեխնիկական խորհուրդ, որի նպատակն է հանրապետության տնտեսությունում կիրառել նորարարական բնույթի մտտեցումներ եւ բարձրացնել այդ բնագավառում ընդունվող իրավական ակտերի արդյունավետությունը, ուսումնասիրել արդյունաբերության ճյուղերի եւ գյուղատնտեսության զարգացման ծրագրերը, մշակել տնտեսական նոր ծրագրեր:

Մ. Հարությունյանը նշեց, որ Գիտության պետական կոմիտեի ծրագրերով շուրջ 50 պետական գիտաժողովներ են կազմակերպվել, եւ մոտ 70 առաջատար գիտաշխատողներ են գործուղվել արտասահման: Իսկ ՀՀ կառավարության 2010թ-ի մայիսի 6-ի որոշմամբ Գիտության պետական կոմիտեն նշանակվել է «Քենդլ» միջազգային կենտրոնի նախագծի իրականացման պատասխանատու:

«Կենտրոնը, որին տրվել է գիտության եւ առաջատար տեխնոլոգիաների բնագավառում ռազմավարական ազգային գերակայության կարգավիճակ, ստեղծվել է Հայաստանում առաջատար կիրառական գիտական հետազոտությունների երկարաժամկետ զարգացումն ապահովելու եւ տնտեսության գիտատար ուղղությունների համար անհրաժեշտ փորձարարական բազա ստեղծելու նպատակով», - ասաց նա՝ հավելելով, որ Գիտության պետական կոմիտեն բանակցում է նաեւ միջազգային «Springer» հրատարակչության հետ, եւ մոտ ապագայում հայ գիտնականները կկարողանան օգտվել այդ հզոր գիտատեղեկատվական կառույցի էլեկտրոնային գրադարանից, որում ընդգրկված է շուրջ 200 հազ. գիտատեխնիկական ամսագիր, 2 500 անուն գիտական այլ գրականություն:

Հայաստանում մասնավոր բիզնեսը «գրագետ» չի վերաբերում հայ գիտնականների աշխատանքներին

Հայաստանում պարբերաբար խոսվում է գիտություն-պետություն-բիզնես կապի անարդյունավետության մասին: Գիտնականները մեղադրում են գործարարներին նրանում, որ վերջիններս չեն ցանկանում իրենց բիզնեսում ներդնել նորարարական տեխնոլոգիաներ, իսկ գործարարներն էլ, իրենց հերթին, առաջ են քաշում այն փաստարկը, որ գիտնականների կատարած հետազոտություններն ու գյուտերը բավականին ռիսկային են:

Հաջորդ տարի ՀՀ պետական բյուջեից գումար կհատկացվի 2-3 ինովացիոն նախագծերի առևտրայնացման նպատակով: Սակայն դրա համար նախ եւ առաջ անհրաժեշտ է, որպեսզի գիտնականի նորարարական առաջարկը հավանության արժանանա եւ գոնե 20 տոկոսի չափով ֆինանսական աջակցություն գտնի գործարարների կողմից:

ՀՀ Գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանը այն կարծիքին է, որ հայաստանցի գործարարները չեն կարողանում գնահատել մեր գիտնականների աշխատանքները, չեն վստահում գիտական աշխատանքներին կամ, մեղմ ասած, դրանց «գրագետ» չեն վերաբերում: Նրա խոսքով՝ անվստահության աճին նպաստում են գիտնականների կողմից օգտագործվող հին սարքավորումներն ու նյութերը, շենքային վատ պայմանները:

Սակայն այսօր հրավիրած մամուլի ասուլիսում Ս. Հարությունյանը պնդեց, որ չկա մի խնդիր, որին հայ գիտնականները չկարողանան լուծում տալ: Մեջբերելով ՀՀ Պաշտպանության նախարարի խոսքը՝ Ս. Հարությունյանը հայտարարեց, որ այսօր ՀՀ Պաշտպանության նախարարության կողմից դրված որեւէ խնդիր չի մնացել անլուծում:

Ս. Հարությունյանի ներկայացմամբ՝ գիտության բյուջեում էապես ավելացել են գիտական ծախսերը, իսկ մինչ կոմիտեի ստեղծումը, գիտությամբ զբաղվող հիմնարկների բյուջեն հիմնականում աշխատավարձի ֆոնդի վրա էր ծախսվում:

Գիտական հոդվածների թվով առաջ ենք մեր հարեւան երկրներից


1992 թվականից մինչ այսօր հայ գիտնականները ավելի քան 6000 հոդված են տպագրել միջազգային բարձր վարկանիշ ունեցող տարբեր ամսագրերում, իսկ այդ հոդվածներին ավելի քան 46 հազ. հղում է կատարվել: 100 կամ 1000 գիտնականին բաժին ընկնող հոդվածների քանակով Հայաստանը առաջ է անցել հարեւան երկրներից՝ Վրաստանից, Ադրբեջանից, անգամ Ռուսաստանից եւ Ուկրաինայից: Այս մասին Երեւանի մամուլի ակումբում սեպտեմբերի 8-ին լրագրողների հետ հանդիպման ժամանակ ասաց ՀՀ Գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանը:



Նրա խոսքով՝ միջազգային բարձր վարկանիշ ունեցող ամսագրերում տպագրված հոդվածների մոտ 57 տոկոսը վերաբերում է ֆիզիկային, 10-12 տոկոսը՝ կենսաբանությանը, այնուհետեւ գալիս է քիմիան, մաթեմատիկան: Ինչ վերաբերում է հումանիտար հոդվածներին, ապա ըստ Ս. Հարությունյանի՝ դրանք թվով ամենաքիչն են՝ ընդամենը մի քանիսը:

«Մենք հետ ենք մնում Բալթյան երկրներից՝ Լատվիա, Լիտվիա, Էստոնիա, սակայն անհրաժեշտ է հաշվի առնել նաեւ այդ երկրներում գիտությանը հատկացվող գումարները եւ դրսի օգնությունը», - ասաց ՀՀ Գիտության պետական կոմիտեի նախագահը:

«УТЕЧКА МОЗГОВ» ОСТАЕТСЯ ВАЖНЕЙШЕЙ ПРОБЛЕМОЙ АРМЯНСКОЙ НАУКИ – ГОСКОМИТЕТ ПО НАУКЕ



«Утечка мозгов» по-прежнему остается одной из самых болезненных проблем армянской науки, считает председатель Государственного комитета по науке Министерства науки и образования Армении Самвел Арутюнян.

«Наука должна быть открытой системой, так как она не может развиваться без международного сотрудничества. Однако многие наши специалисты уезжают за границу и не возвращаются. Это серьезная проблема», - сказал Арутюнян в Национальном пресс-клубе в среду.

По его словам, разрешение вопроса «утечки умов» зависит, в том числе, от эффективности реформ в системе образования.

Арутюнян считает, что если образовательная система будет готовить специалистов, востребованных на рынке труда, проблем станет значительно меньше.

«За последние годы государство предпринимает шаги по исправлению ситуации, однако ключевой проблемой здесь остается вопрос финансирования. Ежегодное финансирование сферы науки составляет \$24 млн., а вместе с грантовыми программами – около \$30 млн. Это небольшие суммы, и естественно, что наши ученые стремятся реализовать себя за границей», - подчеркнул председатель комитета.

При этом он затруднился назвать количество уехавших за рубеж армянских ученых, отметив, что данный процесс носит динамичный характер.

Մամվել Հարությունյան.«Պետք է այնպես անել, որ գնացող գիտնականները վերադառնան»

Երիտասարդ գիտնականների արտահոսքը, ըստ Հայաստանի Գիտության պետական կոմիտեի նախագահ Մամվել Հարությունյանի, ոչ միայն Հայաստանի համար է «ցավոտ հարց», այլև հետխորհրդային գրեթե բոլոր երկրների: Ու չնայած խնդրի լուծման համար Հայաստանը նախաձեռնել և իրականացնում է մի շարք ծրագրեր, սակայն, դրանք, մասնագետի խոսքերով՝ բավարար չեն:

«Որպեսզի կարողանանք դինամիկ հավասարակշռություն ստեղծել գնացող և վերադարձող երիտասարդների միջև, հսկայական գումարներ է անհրաժեշտ ծախսել», - ընդգծեց Ս Հարությունյանն ու հավելեց, որ փոխարենը «գիտության ոլորտին հատկացված գումարները շատ հաճախ չեն բավարարում աշխատանքներն ավարտին հասցնելու համար և մեր գիտնականներից շատերը ստիպված են լինում իրենց ամբիցիաները բավարարել արտերկրում»:

Ճիշտ չէ նաև՝ այնպես անել, որ գիտնականները չգնան Հայաստանից: Իր այս համոզումը Ս Հարությունյանը բացատրեց նրանով, որ համոզված է, որ «գիտությունը բաց սիստեմ է, և եթե մենք ցանկանում են զարգացում ունենալ, ապա մեր երիտասարդները պետք է և՛ գնան, և՛ վերադառնան»:

«Մենք պետք է այնպես անենք, որ գնացող գիտնականները վերադառնան, իսկ սա բավականին ծանր խնդիր է, և էապես կախված է մեր բյուջեից, ինչպես նաև կրթության ոլորտում իրականացվող բարեփոխումներից», - նշեց կոմիտեի նախագահն ու ամփոփելով իր խոսքը՝ ավելացրեց. «Եթե մեր կրթությունը և գիտությունը դառնա պահանջարկված և պետական պատվերը ձևավորվի՝ իսկապես ելնելով մեր տնտեսության այս կամ այն ոլորտի կարիքները բավարարելուց, խնդիրը կլուծվի, մինչդեռ Հայաստանում շատերի կողմից ավելի շատ գնահատվում է դիպլոմը, քան գիտելիքը»:

Գիտության պետական կոմիտեն այժմ ավելի շատ փող ունի և այլ ծրագրեր է իրականացնում



Այսօր լրագրողների հետ հանդիպման ժամանակ Հայաստանի Գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանը ներկայացրեց այն հիմնական ծրագրերն ու աշխատանքները, որոնք կատարվել են վերջին շրջանում՝ գիտությանը հատկացված բյուջեի ավելացված պայմաններում: Նա հայտնեց, որ ավելացված բյուջեի շնորհիվ կոմիտեն այժմ ունի առանձին ֆինանսավորում գիտությանը նպաստող այս կամ այն խնդիրների լուծման ուղղությամբ ծրագրեր իրականացնելու համար, մասնավորապես, գիտաժողովների կազմակերպման, հայ գիտնականների՝ արտասահմանում իրենց ստացած արդյունքները գեկուցելու, երիտասարդներին աջակցելու և այլնի համար:

Կարևորագույն ծրագրերի շարքում կոմիտեի նախագահն առանձնացրեց «Քենդլ» ծրագիրը, որի նպատակն է Հայաստանում ստեղծել նոր սերնդի արագացուցիչ:

«Սա ոչ միայն ես եմ ասում, այլև աշխարհի առաջատար փորձագետներն են փաստում, որ այս ծրագրի իրականացումը գիտության մի շարք ոլորտներում բեկումնային ազդեցություն կունենա», - հայտնեց Ս. Հարությունյանն ու հավելեց, որ «սա համարձակ ծրագիր է Հայաստանի համար, քանի որ Հայաստանը գնտվում է բարդ աշխարհաքաղաքական զարգացումներով տարածաշրջանում և տնտեսական ծանր վիճակում, մինչդեռ կարևորելով ծրագրի նշանակությունը, պատրաստակամություն է հայտնել իրականացնել այն մոտակա տարիներին՝ ֆինանսավորելով ծրագրի 25 տոկոսը»:

Ս. Հարությունյանը տեղեկացրեց նաև, որ Հայաստանը հայտարարել է, որ պատրաստ է ընդունելու բոլոր այն երկրներին, ովքեր ցանկանում են մասնակցել ծրագրին: Հենց այս նպատակով ծրագիր իրականացնող աշխատանքային խումբը այցելություններ է ունեցել մի շարք երկրներ և բանակցություններ է նախատեսում վարել Ֆրանսիայի, Գերմանիայի, ԱՄՆ-ի և Չինաստանի հետ:

«Ծրագիրը ոչ միայն գիտական, այլև՝ քաղաքական կարևոր նշանակություն ունի, որովհետև շատ քիչ են այն երկրները, որոնք միաժամանակ ունեն և՛ ատոմակայան, և՛ արագացուցիչ: Հայաստանը, հայտարարելով, որ ցանկանում է երրորդ սերնդի արագացուցիչի պետություն դառնալ, դրանով իսկ հայտարարում է, որ հավակնում է դառնալ տարածաշրջանում գիտության ոլորտում առաջատար երկրներից մեկը», - ամփոփելով իր խոսքը՝ ընդգծեց Ս. Հարությունյանը:



13:40 08/09/2010 » Հասարակություն

Գիտական ինստիտուտները ձմռանն այլևս հարկադիր պարապուրդում չեն լինի

Շուրջ երեք տարվա կյանք ունեցող գիտության պետական կոմիտեն իր գործունեության ընթացքում ուսումնասիրել ու վեր է հանել ոլորտում առկա խնդիրները: Այսօր լրագրողների հետ հանդիպմանն այս մասին հայտարարեց Գիտության պետական կոմիտեի ղեկավար, գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Մամվել Հարությունյանը, ավելացնելով, որ անկախության տարիներին ոլորտում մանրագնին ուսումնասիրություն չէր իրականացվել:

Կոմիտեում նախանշել են նաև խնդիրների լուծման ուղիները, օրենսդիր ու գործադիր մարմնի կողմից դաշտի կարգավորման իրավական ակտեր են ընդունվել, ծրագրեր մշակվել: Ս. Հարությունյանը դրանցից կարևորում է հայ գիտնականների համախմբման ու հայագիտության զարգացման ծրագրերը:

«Շուտով կառավարարությանը կներկայացվի առաջիկա հինգ տարիների գիտության զարգացման ռազմավարությունը», -ասաց կոմիտեի ղեկավարը:

Նախկինում ոլորտին հատկացված բյուջեի 85 տոկոսը ծախսվում էր աշխատավարձերի համար, իսկ նման դեպքում որակյալ ու լուրջ գիտություն չէր կարելի ակնկալել:

«Կարևորագույն խնդիրներից մեկը մենք համարում էինք բյուջեի այնպիսի վերաբաշխում, որը կբերեր տնտեսական ծախսերի ավելացմանը: Արդյունքում մենք ունենք 70-75 տոկոս աշխատավարձի ֆոնդ, մնացածը՝ տնտեսական և այլ ծախսեր են», -ասաց Ս. Հարությունյանը: Նման վերաբաշխումը թույլ է տվել, որ գիտական ինստիտուտները ջեռուցվեն: Կոմիտեի ղեկավարը հավատացնում է, որ այսօր գրեթե բոլոր ինստիտուտները ջեռուցվում են:

«Դուք երևի գիտեք, որ մինչև 2007 թվականը ինստիտուտների գերակշռող մասը ձմեռային սեզոնին 4-5 ամիս հարկադար պարապուրդում են հայտնվում: Այսօր գրեթե բոլոր ինստիտուտները ձմռան ամիսներին աշխատում են», -ասաց Ս. Հարությունյանը:

Հարությունյան. CANDEL-ը բացի գիտական նշանակությունից, նաև քաղաքական նշանակություն ունի

Հայաստանը մտադիր է իրականացնել CANDEL /Center for the Advancement of Natural Discoveries using Light Emission/ ծրագիրը, որի նպատակն է ստեղծել նոր սերնդի արագացուցիչ, ինչը հնարավորություն կտա գիտության մի շարք բնագավառներում լուծել բեկումնային խնդիրներ, գիտության զարգացման համար լուրջ խթան կհանդիսանա:

«Մասնավորապես Հայաստանում էապես կզարգանա նյութագիտությունը, կառուցվածքային նյութագիտությունը, ֆարմակալոգիան ու գիտության այլ ճյուղեր», - այսօր լրագրողների հետ հանդիպմանը հայտարարեց ԿԳՆ գիտության պետական կոմիտեի ղեկավար Սամվել Հարությունյանը:

Նրա գնահատմամբ, սա շատ համարձակ ծրագիր էր: «Մա միայն իմ գնահատականը չէ, այլ աշխարհի շատ-շատ ճանաչված գիտնականների գնահատականը, որ Հայաստանը գտնվելով այսպիսի բարդ քաղաքական շրջապատում և տնտեսական բավականին ծանր վիճակում համարձակություն ունեցավ հայտարարելու, որ այս ծրագիրը պետական կարևորագույն ծրագիր է ու պատրաստակամություն հայտնեց այն իրականացնել մոտակա տարիներին՝ ֆինանսավորելով ծրագրի արժեքի 25 տոկոսը և տրամադրելով հողատարածք, ապա հայտարարեց, որ պատրաստ է ընդունել այն երկրներին, ովքեր կցանկանան աջակցել ծրագրին», - ասաց կոմիտեի ղեկավարը:

Այն երկրները, որոնք կաջակցենք ծրագրի իրականացմանը, կդառնան դրա համահեղինակներ ու համակատարողներ: Այսօր աշխատանքները ինտենսիվ ընթանում են, այցելություն է եղել Փարիզ, համագործակցության հույս այստեղից կա: Առաջիկայում համագործակցության ակնկալիքով այցեր կլինեն Ռուսաստան, Գերմանիա, ԱՄՆ, բանակցություններ կլինեն նաև Չինաստանի հետ:

Ս. Հարությունյանի վստահեցմամբ, բացի գիտականից, ծրագիրն ունի նաև քաղաքական նշանակություն: «Շատ քիչ են այն երկրները, որոնք միաժամանակ ունեն և ատոմակայան, և արագացուցիչ: Հայաստանը հայտարարելով, որ ցանկանում է երրորդ սերնդի արագացուցիչ ունենալ, դրանով իսկ հայտարարում է, որ ցանկանում է դառնալ գիտության առաջատար երկրներից մեկը», - պարզաբանեց կոմիտեի ղեկավարը, ավելացնելով, որ դա հնարավորություն կտա թուլացնել քաղաքական լարվածությունը:

Հայաստանը հավակնում է դառնալ գիտության ոլորտում առաջատար

Այս տարիների ընթացքում փոփոխություններ են տեղի ունեցել գիտությանը հատկացված բյուջեում. էապես ավելացել են գիտությանը զբաղվող հիմնարկների տնտեսական ծախսերի համար նախատեսված գումարները: Այս մասին լրագրողների հետ հանդիպմանը հայտնեց Գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանը:

Ս. Հարությունյանը, անդրադառնալով վերջին շրջանում ավելացված բյուջեի շնորհիվ իրականացված աշխատանքներին, հայտնեց, որ այժմ կոմիտեն ունի առանձին ֆինանսավորում՝ գիտությանը նպաստող այս կամ այն խնդիրների լուծման ուղղությամբ ծրագրեր իրականացնելու համար, մասնավորապես, գիտաժողովների կազմակերպման, հայ գիտնականների՝ արտասահմանում իրենց ստացած արդյունքները զեկուցելու, երիտասարդներին աջակցելու համար:

Իրականացվող ծրագրերի շարքում կոմիտեի նախագահն առանձնացրեց «Քենդլ» ծրագիրը, որի նպատակն է Հայաստանում ստեղծել նոր սերնդի արագացուցիչ, որը «գիտության մի շարք ոլորտներում բեկումային ազդեցություն կունենա»: Ըստ Ս. Հարությունյանի՝ «սա համարձակ ծրագիր է, քանի որ Հայաստանը գնտվում է բարդ աշխարհաքաղաքական զարգացումներով տարածաշրջանում և տնտեսական ծանր վիճակում, մինչդեռ կարևորելով ծրագրի նշանակությունը, պատրաստակամություն է հայտնել իրականացնել այն մոտակա տարիներին՝ ֆինանսավորելով ծրագրի 25 տոկոսը:

Բացի այդ՝ Հայաստանը հայտարարել է, որ պատրաստ է ընդունել բոլոր այն երկրներին, ովքեր ցանկանում են մասնակցել ծրագրին: Հենց այս նպատակով ծրագիր իրականացնող աշխատանքային խումբը այցելություններ է ունեցել մի շարք երկրներ և բանակցություններ է նախատեսում վարել Ֆրանսիայի, Գերմանիայի, ԱՄՆ-ի և Չինաստանի հետ:

«Ծրագիրը ոչ միայն գիտական, այլև քաղաքական կարևոր նշանակություն ունի, որովհետև շատ քիչ են այն երկրները, որոնք միաժամանակ ունեն և՛ ատոմակայան, և՛ արագացուցիչ», - հատնեց Ս. Հարությունյանն ու ընդգծեց. «Հայաստանը, հայտարարելով, որ ցանկանում է երրորդ սերնդի արագացուցիչ պետություն դառնալ, դրանով իսկ հայտարարում է, որ հավակնում է դառնալ տարածաշրջանում գիտության ոլորտում առաջատար երկրներից մեկը»:

Երիտասարդ գիտնականների արտահոսքը «ցավոտ հարց է». Ինչ անել

«Գիտնականների արտահոսքը ցավոտ հարց է, և այս խնդիրը ոչ միայն Հայաստանի, այլև ամբողջ հետխորհրդային տարածաշրջանի երկրների խնդիրն է», - հայտնեց Հայաստանի Գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանը:

Ըստ Ս. Հարությունյանի՝ խնդրի լուծման համար Հայաստանը նախաձեռնել և իրականացնում է մի շարք ծրագրեր: Մինևույն ժամանակ, կոմիտեի նախագահի խոսքերով, «այստեղ էլ հարցը կայանում է նրանում, թե այդ ծրագրերը բավարար են արդյոք խնդիրը լուծելու համար»:

«Իհարկե բավարար չեն», - իր իսկ հարցադրմանը պատասխանեց Ս. Հարությունյանն ու հավելեց. «Որպեսզի կարողանանք դինամիկ հավասարակշռություն ստեղծել գնացող և վերադարձող երիտասարդների միջև, հսկայական գումարներ է անհրաժեշտ ծախսել, մինչդեռ գիտության ոլորտին հատկացված գումարները շատ հաճախ չեն բավարարում աշխատանքներն ավարտին հասցնելու համար և մեր գիտնականներից շատերը ստիպված են լինում իրենց ամբիջիաները բավարարել արտերկրում»:

Մյուս կողմից Ս. Հարությունյանը համոզված է, որ ճիշտ չի լինի անել ամեն ինչ, որ երիտասարդ գիտնականները ընդհանրապես չգնան արտերկիր: Նրա կարծիքով՝ «գիտությունը բաց համակարգ է, և եթե մենք ցանկանում ենք զարգացում ունենալ, ապա մեր երիտասարդները պետք է և՛ գնան, և՛ վերադառնան, ու մեր ամբողջ խնդիրը կայանում է նրանում, որ գնացողները վերադառնան»:

«Մա բավականին ծանր խնդիր է, և էապես կախված է մեր բյուջեից, ինչպես նաև կրթության ոլորտում իրականացվող բարեփոխումներից: Եթե մեր կրթությունը և գիտությունը դառնա պահանջված և պետական պատվերը ձևավորվի իսկապես ելնելով մեր տնտեսության այս կամ այն ոլորտի կարիքները բավարարելուց՝ խնդիրը կլուծվի, մինչդեռ Հայաստանում շատերի կողմից ավելի շատ գնահատվում է դիպլոմը, քան գիտելիքը», - շեշտեց Ս. Հարությունյանը:

Մասնավոր հատվածը չի վստահում հայ գիտնականներին

«Որպեսզի գիտությունը դառնա մուլտիպլիկատիվ էֆեկտ առաջացնող ոլորտ, ապա պետական միջոցները միայն բավարար չեն, իսկ Հայաստանում մեր մասնավոր հատվածը դեռ հասու չէ, դեռ չի կարողանում լավ գնահատել գիտության դերը»,- հայտնեց Հայաստանի Գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանը:

Ս. Հարությունյանի խոսքերով՝ մասնավոր հատվածը մի կողմից չի վստահում հայ գիտնականներին, մյուս կողմից էլ՝ հայ գիտնականների աշխատանքին լուրջ չի վերաբերում, օրինակ այն դեպքում, երբ «տեխնոլոգիաներ է գնում դրսից, մինչդեռ չկա մի տեխնիկական խնդիր, որ մեր գիտնականներն ի գորու չլինեն լուծել»:

«Զվստահելու համար էլ օբյեկտիվ պատճառներ կան. եթե հաշվի առնենք մեր գիտական հիմնարկների շենքային պայմանները, սարքավորումների հնությունը, ապա ոչ մի բիզնեսմեն առանձնապես լուրջ չի վերաբերվի այն գիտնականին, ով աշխատում է 40 տարվա հնությամբ սարքավորման վրա և, որի աշխատասենյակի տանիքը կաթում է»,- բացատրեց կոմիտեի նախագահը:

Այնուամենայնիվ՝ Ս. Հարությունյանը կոչ արեց բիզնեսմեններին՝ վստահել մեր գիտնականներին, քանի որ նրանց դրսից ավելի շատ են վստահում:

«Եթե վստահենք, անպայման օգուտ կստանանք մեր գիտնականներից»,- ամփոփելով իր խոսքն՝ ընդգծեց Ս. Հարությունյանը:

Ինչպե՞ս կանխել «ուղեղների արտահոսքը» Հայաստանից



Հայաստանից գիտնականների հեռանալը կանխելու համար որոշակի քայլեր են կատարվում: Մասնավորապես, «Լույս» հիմնադրամը, ինչպես նաև ՀՀ ԿԳՆ Գիտության պետական կոմիտեն գրանտային ծրագրեր են իրականացնում հատուկ երիտասարդ գիտնականների համար: Այս մասին այսօր ասաց Գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանը:

«Որպեսզի կարողանանք դինամիկ հավասարակշռություն ստեղծել գնացող երիտասարդների և վերադարձողների միջև, լուրջ գումարներ է հարկավոր ծախսել: Ինչ վերաբերում է ընդհանրապես երիտասարդների չգնալուն, եղպես մտածել չի կարելի, որովհետև գիտությունը բաց համակարգ է: Եթե մենք ուզում ենք լուրջ գիտություն ունենալ, ապա երիտասարդը պետք է և գնա, և վերադառնա», – հայտարարեց Սամվել Հարությունյանը:

Միաժամանակ, ըստ կոմիտեի նախագահի, խնդիրը բավականին ծանր է և դրա լուծումը երկար ժամանակ ու ծախսեր է պահանջում, «այն կախված է մեր բյուջեից և կրթության ոլորտում իրականացվելիք բարեփոխումներից»: «Դուք շատ լավ գիտեք, որ Հայաստանում այսօր գործում են ավելի քան 80 պետական և մասնավոր համալսարաններ, արդյո՞ք այդքան համալսարան մեզ պետք է: Այ, եթե մեր կրթությունն ու գիտությունը դառնան պահանջարկված, և պետական պատվերը ձևավորվի, իրոք, ելնելով մեր տնտեսության կարիքները բավարարելուց, ինձ թվում է, այս խնդիրը կամաց–կամաց կկարգավորվի», – ասաց նա:

Հարությունյանի կարծիքով, սակայն, «մեր հայկական մենթալիտետը և հետխորհրդային հարաբերությունների մենթալիտետն այնպիսին է, որ շատ հաճախ դիպլոմին ավելի մեծ արժեք են տալիս, քան գիտելիքներին»:

Հեղինակավոր ամսագրերում տպագրված գիտական աշխատանքների քանակով Հայաստանն առաջատար է տարածաշրջանում



1992 թվականից մինչև այսօր միջազգային գիտական հեղինակավոր ամսագրերում տպագրվել են հայ գիտնականների շուրջ 6000 գիտական աշխատանքներ, որոնցից արվել են 46 հազար հղումներ: Այսօրվա ասուլիսի ժամանակ այս մասին ասաց ՀՀ Կրթության և գիտության նախարարության Գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանը: Ըստ նրա, վերը նշված ցուցանիշով Հայաստանն առաջատարներից է տարածաշրջանային երկրների շարքում:

Հարցին, թե հայ գիտնականները գիտության որ ոլորտներում են առաջատար, Սամվել Հարությունյանը պատասխանեց, որ վերոհիշյալ գիտական աշխատանքների հեղինակների 57 տոկոսը ֆիզիկոսներ են, 10–12 տոկոսը՝ կենսաբաններ, 5–6 տոկոսը՝ քիմիայի բնագավառի գիտնականներ, 1-2 տոկոսը՝ մաթեմատիկայի, մնացածը՝ այլ ոլորտների մասնագետներ:

Գիտության պետական կոմիտեի նախագահը նաև ընդգծեց, որ ԽՍՀՄ տարիներին Հայաստանը ամբողջ խորհրդային տարածքի համար էր մասնագետներ պատրաստում, այդ է պատճառը, որ մեծ էր գիտական ոլորտում հայտնվել ցանկացողների թիվը, ինչը չես ասի այսօրվա համար. գիտությամբ զբաղվողների թիվը նվազել է:

Սամվել Հարությունյանը միաժամանակ նշեց, որ այսօր գիտնականներն «ավելի ուժեղ» են, որովհետև ավելի տեղեկացված են, քան իրենց «խորհրդային» գործընկերները, «այն ժամանակ չկար համակարգիչ, չկար համացանց, կապի միջոցներն այսօր ընձեռում են հսկայական հնարավորություններ»:

Հայաստանը հուսով է, որ Ռուսաստանը կմասնակցի CANDLE գիտական նախագծին

ԵՐԵՎԱՆ, 8 սեպտեմբերի. /Նովոստի-Արմենիա/. Հայաստանը հուսով է, որ Ռուսաստանն ու ԱՄՆ-ն կմասնակցեն CANDLE խոշոր գիտական նախագծի իրագործմանը, հայտարարեց ՀՀ կրթության և գիտության նախարարությանն առընթեր Գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանը:

«ՔԵՆԴԼ»-ը (CANDLE-Center for the Advancement of Natural Discoveries using Light Emission) Հայաստանում 3 ԳԵՎ էներգիայով 3-րդ սերնդի սինթրոտրոնային լույսի աղբյուրի նախագիծ է, որը հնարավորություն կստեղծի ժամանակակից հիմնարար և կիրառական հետազոտություններ կատարել կյանքի գիտությունների, նյութագիտության և շրջակա միջավայրի ուսումնասիրության բնագավառներում: Փորձագետների տվյալների համաձայն՝ այդ արագացուցիչի արժեքը գնահատվում է մոտավորապես 100 միլիոն դոլար: Պետությունը պատրաստ է ֆինանսավորել նախագծի արժեքի 25 տոկոսը:

«Մենք հույս ունենք, որ Ռուսաստանը կմասնակցի նախագծին: Սեպտեմբերի 13-ին նախագծի ներկայացուցիչները կմեկնեն Մոսկվա՝ բանակցություններ անցկացնելու նպատակով», - չորեքշաբթի ասաց նա Մամուլի ազգային ակումբում:

Հարությունյանն ավելացրեց, որ այնուհետև պատվիրակությունը կմեկնի ԱՄՆ:

Կոմիտեի ղեկավարն ընդգծեց, որ CANDLE նախագծի իրագործումը հզոր ազդակ կլինի հայկական գիտության զարգացման համար: «Դա բեկումնային պահ կդառնա մի շարք խնդիրների լուծման գործում, մասնավորապես՝ նյութագիտության և դեղագործության ոլորտներում», - ասաց Հարությունյանը՝ ընդգծելով, որ միջազգային փորձագետները բարձր են գնահատում CANDLE-ի գիտական նշանակությունը:

«Նախագծի իրագործումը կունենա ոչ միայն գիտական, այլև քաղաքական նշանակություն, քանի որ դա կբարձրացնի Հայաստանի կարգավիճակն ու միջազգային վարկանիշը՝ տարածաշրջանում մղելով նրան առաջնային դիրքեր նորարար տեխնոլոգիաների գծով», - ավելացրեց Հարությունյանը:

CANDLE նախագիծը ճառագայթման աղբյուր է երրորդ սերնդի արագացնող-կուտակիչ համալիրի հիման վրա 2 մլրդ էլեկտրոնվոլտ էլեկտրոնների էներգիայով: Համալիրը թույլ է տալիս ալիքների երկարության լայն դիապազոնում՝ ուլտրամանուշակագույնից մինչև ռենտգեն, հզոր բացառիկ լուսային հոսքի ավելի քան 60 ալիք ունենալ:

Ներկայումս աշխարհում գործում են լույսի ավելի քան 40 աղբյուրներ, որոնք հիմնականում տեղակայված են ԱՄՆ-ում, Արևմտյան Եվրոպայում և Ճապոնիայում

Գիտության զարգացումը կթուլացնի լարվածությունը տարածաշրջանում. փորձագետ



ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանն այսօր հրավիրված մամուլի ասուլիսին լրագրողներին ներկայացրել է գիտության զարգացման հնարավորությունները Հայաստանում:

Մասնավորապես, նա խոսել է «Քենդլ» միջազգային կենտրոնի նախագծի մասին, որը ստեղծվել է Հայաստանում առաջատար կիրառական գիտական հետազոտությունների երկարաժամկետ զարգացումն ապահովելու և տնտեսության գիտատար ուղղությունների համար անհրաժեշտ փորձարարական բազա ստեղծելու նպատակով:

«Ծրագրի նպատակն է Հայաստանում ստեղծել նոր սերնդի արագացուցիչ: Այս սարքը հնարավորություն կտա գիտության շատ ոլորտներում լուծել բեկումնային խնդիրներ», - նշել է Սամվել Հարությունյանը և, մասնավորեցնելով, հավելել, որ այն կնպաստի Հայաստանում նյութագիտության, կառուցվածքային կենսաբանության և գիտության մի շարք այլ ոլորտների զարգացմանը:

«Այս ծրագիրը ունի նաև քաղաքական նշանակություն, որովհետև շատ քիչ են այն երկրները, որոնք ունեն և ատոմակայան, և արագացուցիչ, իսկ այս ծրագրով Հայաստանը հավակնում է դառնալ տարածաշրջանում գիտության առաջատար երկրներից մեկը», - ասել է Սամվել Հարությունյանը և հավելել, որ ծրագիրը թույլ կտա նաև էապես թուլացնել տարածաշրջանում առկա քաղաքական լարվածությունը, քանի որ հայտնի է, որ գիտական համագործակցությունը սովորաբար միշտ բերում է լարված մթնոլորտի թուլացման: